


ՆԱԿԱԿ ՓՈՒՆ ԴՐԱՄԻ ԵՒ ՏՈԿՈՍԻ ՄԱՍԻՆ

Մի՛ Խորհիր յափշտակութեամբ հաւաքել եւ ապա մեղքերուդ թողութեան համար ողորմութիւն ընել, որովհետեւ կրակը երբեք կարելի չէ կրակով մարել, վերքը՝ վերքով բուժել, մեղքը՝ մեղքով սրբել, կամ անօրէնութիւնները՝ անօրէնութեամբ քաշել, որովհետեւ տոկոսներու անօրէնութիւնները շատ գէշ են ու անոնց յանձնառութիւնները նման են յղի կնոջ երկունքին: Աւելին, երբ պարտապանը աղքատ է, հետեւաբար հոգ կ'ընէ ու կը մաշի, գիշերը քուն չունի եւ կամ անհանդարտ քուն մը ունի, իսկ ցերեկը, տխուր, մեղամաղանոտ եւ մտահոգ կերպով կ'երթայ ու կու գայ եւ չի գիտեր, թէ ուր կ'երթայ: Երբեմն իր ինչքերէն մաս մը կ'ուզէ ծախել՝ փոխ առած դրամին տոկոսը հատուցանելու համար, երբեմն հոգին կորսնցնելու եւ Աստուծոյ ընդդիմանալու գնով՝ կ'ուզէ անօրէն կերպով գողութիւն ընել, որպէսզի կարողանայ վաշխառուին տոկոսը հատուցանել, եւ երբեմն կը մտածէ գաղտնօրէն փախչիլ եւ հեռու երկիր մը երթալ: Իր պարտքերուն սաստկութեան պատճառաւ թափառակամի մը նման կը դեգերի, բազմաթիւ խառն մտածումներու կ'ենթարկուի եւ իր անհանգիստ մտքին պատճառաւ կը մոռնայ Աստուծոյ աղօթել: Երբ ոտնաձայն մը լսէ, վախէն, սրտաբեկ կ'ըլլայ ներսը: Եթէ պարտապանը վաշխառուն տեսնէ դուրսը կը պահուրտի, ինչպէս որ պիտի ընէր անակնկալ աղէտի մը դիմաց, իսկ սիրտը սպասողական վիճակի մը մէջ կը դողայ, իսկ ինք կանգնած կը մնայ գրիխիկոր ու պապանձած. վաշխառուին ո՛չ կրնայ եւ ո՛չ ալ կը համարձակի նայիլ, որովհետեւ չունի տալիք:

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԼՏՎՐԼԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀՎՏԱՏՈՒՄ


2.- Պատրաստութիւն ընծաներուն

Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՌԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Վերոյիշեալ խնդրանքներէն ետք, պատարագիչ քահանան իր աղերսանքը Աստուծոյ ուղղելով՝ յիշատակութիւնը կը կատարէ հայոց հայրապետին եւ թեմակալ առաջորդին եւ անոնց երկար կեանք մաղթելով կ'ընէ.

Ո՛վ Տէր, մանաւանդ յիշէ՛ մեր եպիսկոպոսապետը՝ (այս անուն) սրբազնագոյն Կաթողիկոսը, եւ այս թեմի առաջնորդը՝ (այս անուն) եպիսկոպոսը: Շնորհէ՛ որ անոնք երկար աւտեն մեզ հովուէն ուղի՛ղ ուսուցումով:

Խնդրանքները կը շարունակուին, այս անգամ՝ սարկաւազի կողմէ Աստուծոյ ընծայուած գոհութեամբ եւ փառաբանութեան խօսքերուն մէջէն ... Շարունակելի



ԲՈՒ ԽՈՍՔԻ ԽՍ ՂՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119.105)

ՃԷ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2024 ԹԻՒ 48

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԵՆԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ԵՍ. 36.22-37.11: Ա. ԹՍ. 4.1-11: ՂԿ. 13.1-9

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍ 13.1-9

Ոմանք եկան Յիսուսի եւ պատմեցին այն գալիլիացիներուն մասին, որոնք Պիղատոսի կողմէ սպաննուեցան, երբ Աստուծոյ զոհ կը մատուցանէին: Յիսուս անոնց ըսաւ. «Կը կարծէ՞ք, թէ սպաննուող գալիլիացիները միս բոլոր գալիլիացիներէն ատելի մեղաւոր էին, որ այդպիսի վախճան մը ունեցան: Ո՛չ: Կ'ըսեմ ձեզի, որ եթէ չսպաշխարէք՝ դուք բոլորդ ալ նոյնպէս պիտի մեռնիք: Կամ ի՞նչ կը մտածէք այն տասնութ մարդոց մասին, որոնց վրայ ինկաւ աշտարակը Սելվսամի մէջ, եւ սպաննեց զանոնք: Անոնք ատելի՞ յանցաւոր էին Երուսաղէմի բոլոր բնակիչներէն: Ո՛չ: Կ'ըսեմ ձեզի, որ բոլորդ ալ նոյնպէս պիտի մեռնիք՝ եթէ չսպաշխարէք»:

Անոնց հետեւեալ առակը պատմեց. «Մարդ մը կար, որ իր այգիին մէջ թգենի մը տնկած էր: Երբ ժամանակը եղաւ, թուզ քաղելու գնաց, բայց թգենիին վրայ պտուղ չգտաւ: Այգեպանին ըսաւ. «Այս երրորդ տարին է, որ կու գամ թուզ քաղելու, բայց չեմ գտներ: Ուստի կտրէ՛ զայն, ինչո՞ւ անիմաստ կերպով տեղ գրաւէ»: Այգեպանը պատասխանեց. «Տէ՛ր, թող այս տարի ալ մնայ: Ես իր շուրջի հողը կրկին կը փորեմ եւ պարարտացուցիչ կը դնեմ: Այս ձեռով թերեւս պտուղ տայ, ապա թէ ոչ գալ տարի կտրէ զայն»:

Աշխարհական թէ հոգեւորական, ամենուն պարտքն է աշխատիլ, որ մաքուր ըլլանք մեր խղիմտանքին եւ Աստուծոյ առջեւ, սիրով ու լայնախոհ ոգիով յարգենք մեր Ս. եկեղեցւոյ կարգն ու կանոնը, գործնականապէս աշխատինք անոր բարեկարգութեան եւ պայծառութեան, եւ ո՛չ թէ գլուխ բռնելով եւ անձնական կարիքներու հետեւելով:

Դժբախտաբար, ոմանք ո՛չ թէ միայն չեն գիտեր խոստովանութեան եւ ապաշխարութեան նշանակութիւնը եւ չեն զգար անոնց պետքը իրենց կեանքին մէջ, այլ՝ ձեռակալ եւ աւելորդ բաներ կը նկատեն զանոնք:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Ս. ԹԱԴԵՆՈՍ ԵՒ
Ս. ԲԱՐԹՈՂԻՄԵՆՈՍ ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ
ՏՕՆ

Ամեն տարի, Դեկտեմբեր ամսուան ընթացքին կը յիշատակուի Յիսուսի առաջին աշակերտներէն՝ Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքելներուն տօնը: Անոնք Հայաստանի մէջ քրիստոնէութեան քարոզչութիւնը սկսած են կատարել առաջին դարէն սկսեալ, Յիսուսի համբարձումէն ետք:

Հայաստանը այդ օրերուն կը նկատուէր կարեւոր եւ բազմամարդ երկիր: Ս. Թադէոսի եւ Ս. Բարթողիմէոսի կը վիճակուի Հայաստանէն ներս քրիստոնէութիւնը տարածելու դժուար գործը, սրուած ըլլալով, որ այդ տարիներուն հայ ժողովուրդը բազմաստեղծեան կրօն ունէր:

Ո՞Վ ԷՐ Ս. ԹԱԴԵՆՈՍ

Յիսուսի 12 աշակերտներէն մէկն էր: Յայտնի չէ, թէ երբ ծնած է, բայց նահատակուած է իր քարոզչական առաքելութեան նամբուն վրայ՝ շուրջ 46 թուականին:

Թադէոս առաքել կը յաջողի քրիստոնէութեան կրօնը տարածել հայոց արհունական պալատէն ներս՝ քրիստոնէայ մկրտելով Սանդուխտ կոյսը, որ Սանատրուկ թագաւորին աղջիկն էր: Թագաւորը կը փորձէ իր աղջիկը վերադարձնել փութերու պաշտամունքին եւ ձախողելով սպաննել կու տայ թէ՛ Սանդուխտ կոյսը, թէ՛ Թադէոս առաքելը: Մինչ այդ, Արտագաւառի բնակչութիւնը, հետեւած ըլլալով Ս. Թադէոսի քարոզչութեան, անոր յիշատակին կը հիմնէ Թադէի վանքը շուրջ 66 թուին, որ դարերու ընթացքին կը դառնայ հայ ժողովուրդի հոգեւոր կեդրոններէն մէկը:

Ո՞Վ ԷՐ Ս. ԲԱՐԹՈՂԻՄԵՆՈՍ

Բարթողիմէոս Յիսուսի 12 աշակերտներէն մէկն էր: Անոր կը տրուի նաեւ Նաթանայէլ անունը, որ կը նշանակէ «Աստուծոյ Նուէր»:

Ան քրիստոնէութիւնը քարոզած է Հնդկաստանի, Պարսկաստանի, Արաբիոյ եւ Հայաստանի մէջ: 66 թուին տեղի ունեցած է իր նահատակութիւնը:

Բարթողիմէոս Ս. Թադէոս առաքելին հետ, կը նկատուի Հայաստանի մէջ քրիստոնէութեան առաջին քարոզիչը:

Առաքելը Հայաստանի մէջ իր քարոզչական աշխատանքը սկսած է Գողթան գաւառէն, ապա՝ Սիւնեաց, Արարատեան եւ Վասպուրական նահանգներուն մէջ: Ան կը յաջողի նաեւ հայոց արհունի շրջանակներէն ներս ալ քարոզչութիւն կատարել: Քրիստոնէայ կը մկրտէ Սանատրուկ թագաւորին ֆոյրը՝ Ոգուհին եւ հազարապետ Տերեմտիոսը: Հետեւանքը ա՛յն կ'ըլլայ, որ թագաւորը սպաննել կու տայ թէ՛ ֆոյրը, թէ՛ հազարապետը, թէ՛ առաքելը:

Հայ ժողովուրդը, ի յիշատակ Ս. Բարթողիմէոսին, չորրորդ դարուն Վասպուրականի Աղբակ գաւառին մէջ կը շինէ վանք մը, որուն չորս աւանդատուներէն մէկուն մէջ գոյութիւն ունի տապանաքար մը, որուն վրայ արձանագրուած է, թէ հոն թաղուած է Ս. Բարթողիմէոս Առաքելը:

Վանքը ներկայիս կիսաւեր վիճակի մէջ է: Շնորհիւ Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքելներուն, Հայաստանեայց Մայր Եկեղեցին **ԱՌԱՔԵ-ԼԱԿԱՆ** կը կոչուի՝ Յիսուսի առաքելներու նախաձեռնութեամբ հիմնուած ըլլալուն համար:

Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

ԶԿԱՅ ՈՐԻՇ ԳՈՐՈՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ

«Ով, որ ինձմէ անցնելով ներս մտնէ՝ պիտի փրկուի» (Յհ. 10.9): Քրիստոս իր այս հաստատումով, ըսել չ'ուզէր, թէ ինք պարզապէս մէկն է, որ մարդիկը փրկութեան կը տանի: Իր ըսել ուզածը այն է, որ ինք մէկ է միակ ճամբան է փրկութեան: Ոչ ոք կրնայ փրկութիւն ձեռք ձգել առանց իրեն: Մտցնող անձը, անձը ուրկէ կը մտնենք եւ անձը ուր կը մտնենք՝ Յիսուս ինքն է:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ ՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Երբեմն մարդիկ հարց կու տան մեզի, թէ հեթանոսները պիտի փրկուի՞ն: Ես պիտի չպատասխանեմ այս հարցումին, այլ՝ պարզապէս պիտի յիշեցնեմ ձեզի Պօղոս առաքելին խօսքը. «Տէր Յիսուս Քրիստոսի հաւատայ եւ ամբողջ ընտանիքովդ կը փրկուիս» (Գրծ. 16.31): Այլուր առաքելը կը հաստատէ, թէ կրնանք արդարանալ «միայն Յիսուս Քրիստոսի հաւատալով» (Գղ. 2.16): Այս է նման համարներ ցոյց կու տան, որ Յիսուս փրկութեան առաջնորդող դռներէն մէկը չէ, այլ՝ մէկ է միակ դուռն է: Չկայ ուրիշ դուռ, որովհետեւ չկայ ուրիշ մէկը, որ խաչուեցաւ մեր փրկութեան համար:

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ...

ԵՐԲ ԱՍՏՈՒԾՄԷ ՕՐՀՆՈՒԹԻՆ Կ'ՈՒԶԵՍ, ԿԱՐԳԱ՛Ս ԱՎՂԱՄՈ Շ1

Ո՛վ Տէր, քեզի՛ ապաւինեցայ, թող ամօթով չմնամ բնաւ: Դուն, որ արդար ես, ապատէ՛ վիս եւ պահէ՛, ականջդ ինձի խոնարհեցուր եւ փրկէ՛ վիս: Ինձի պաշտպան, ապաստանարան եղիր եւ վիս փրկէ՛, որովհետեւ ապաւէնս եւ իմ ամբողջ դո՛ւն ես:

Աստուած իմ, վիս ապատէ՛ ամբարիշտներէն, անարդար եւ անգութ մարդոցմէ: Դո՛ւն ես յոյսը, Տէ՛ր, իմ Տէ՛րս, մատղաշ տարիքէս յոյսս քեզի՛ կապած եմ: Իմ ծնելէս իսկ առաջ ես քեզի յանձնուեցայ, դեռ մօրս որովայնէն՝ դո՛ւն եղար ապաւէնս: Ընդմիշտ պիտի օրհներգեմ քեզ: Թէեւ շատեր նեղութիւններս քեզի մերժուած ըլլալու նշան համարեցին, բայց իմ հզօր օգնականս ես դուն: Բերանս անդադար քե՛զ կ'օրհներգէ, ամբողջ օրը քե՛զ կը փառաւորէ:

Ծերութեանս ատեն վիս մէկդի մի՛ նետեր, վիս մի՛ թողուր՝ երբ ուժերս լքեն վիս: Որովհետեւ թշնամիներս ինձի դէմ կը խօսին, վիս սպաննելու համար իրարու հետ կը խորհրդակցին: Իրարու կ'ըսեն.՝ «Ահա Աստուած լքեր է վինք: Եկէք հալածենք եւ բռնենք վինք, որովհետեւ չկայ մէկը որ վինք ապատէ»: Ո՛վ Աստուած ինձմէ՛ հեռու մի՛ մնար, ո՛վ իմ Աստուածս փութա՛, ինձի օգնութեան հասիր:

Թող վիս չարախօսողները ամբշնան ու կորսուին, թող նախատինքով ծածկուին ու խաչատուակ ըլլան ինձի չարիք կամեցողները: